

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուլբուլ, կես տարվանը 6 բուլբուլ, Կասպիան համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՍԱՐԻ

«ՄԵԼԻ» ԼՐԱԳԻՐԸ

Մայիսի 1-ից մինչև տարվայ վերջը կարժեհայ ԵՕԹԸ բուլբուլ:

Դիմել Тифлисъ, редакция «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև մայիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղորօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն կրթութեան խնդիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱՊԵՐՏ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ալեքսի:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

I

Կովկասում բարձրագոյն դպրոցներ հիմնելու խնդիրը դարձել է հերթական այնպիսի պահանջներից մէկը, որոնք ամեն օր, ամեն մի կենսական խոշոր երևոյթի քննութեան ժամանակ հանդէս են գալիս իրանց անհրաժեշտութեան ստորագրական ոյժով:

Մեր երկրին հարկաւոր են հասարակական կուլտուրական գործողների ամբողջ շարքեր, որոնք գինւած լինելով գիտութեամբ, իրանց անմիջական գործունէութեամբ նպաստելին մեր երկրի թէ հասարակական և թէ անտեսական զարգացմանը: Մեզ հարկաւոր են գիտական հաստատութիւններ, որոնք զբաղվելին մեզ շրջապատող իրականութեան բազմազան երևոյթներով, որոնք ուսումնասիրելին և հետազոտելին մեր երկրի բազմատեսակ բնութիւնը և տնտեսութիւնը և որոնք կազմակերպելին տեղական ձեռնհաս գործողներին ամբողջ գիտութիւններ երկրում գործելու համար: Կովկասեան երիտասարդները ներկայումս բարձրագոյն ուսում առնելու համար գնում են Ռուսաստանի և արտասահմանի զանազան քաղաքները: Բայց անկասկած՝ երիտասարդների մի մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱՆ ԱԼԵՔՍԻՏ

II

Արեւելագետների XIV Միջազգային կոնգրեսը

Ալեքսի, 26/13 ապրիլ 1905 թ.

Դեռ 1902 թ. Համբուրգում գումարված արեւելագետների XIII կոնգրեսը որոշել էր յաջորդ կոնգրեսը կայացնել Ալեքսիում, 1905 թ. Հասկանական կաթնաւորները ժամանակ Ալեքսիում ընդհանուր-նահանգապետի խոստացել էր իր լայն աշակերտները կոնգրեսի կազմակերպութիւնը գլուխ բերելու համար: Իր այդ խոստումը, պէտք է ասել, նա մեծ պատուով կատարեց և գլուխ բերեց: Ալեքսիում ընդհանուր-նահանգապետը, Ֆրանսիական պարլամենտի պատգամաւոր պ. Ժոննարը (Jonnart) իր բարձր խնամատարութեան տակ առաւ կոնգրեսը, որի պատուաւոր նախագահ նշանակվեց Շվեյցարիայի և Նորվեգիայի թագաւոր Օսկար II, որ յայտնի է արեւելագիտութեան և նրա պատմագէտի: Սեմաք, անդամ ինտերուստի-բացի այդ երկու յանձնաժողովներից, կազմվեց

թիւ էլ մնում է երկրի մէջ, հարաւորութիւն չունենալով բաւականաչափ ներթափանցելու գիտելու օտար երկրում ապրելու համար: Իսկ գնացողներից շատ շատերը ենթարկվում են մի շարք այնպիսի գրկանքների և նեղութիւնների, որոնք մաշում են նրանց մատաղ ոյժերը և երբեմն այնպէս քայքայում նրանց առողջութիւնը, որ նրանք ստիպված են լինում դադարեցնել իրանց ուսումը, կամ երկար ժամանակ կազուրել իրանց, մինչև, որ վերականգնած կը լինեն իրանց ոյժերը:

Մենք լաւ գիտենք, որ նոյն իսկ այն դէպքում, երբ մեր երկրում բացված կը լինեն բարձրագոյն դպրոցներ, դարձեալ կովկասեան ուսանողների մի որոշ թիւ կը գնայ ուրիշ տեղեր ուսում առնելու համար, բայց դա չէ հերքում բարձրագոյն դպրոցների անհրաժեշտութիւնը: Կովկասում, որովհետեւ հիւսիսի բնակիչները շատ են էլ կը գնան մեր դպրոցները, ամենակին չը հերքելով բարձրագոյն դպրոցի գոյութեան իրաւունքը հիւսիսում: Բարձրագոյն դպրոցները մեզանում գոհացնելով տեղական պահանջները, կը դառնան գիտութեան սերմարաններ և այն բոլորի համար, որոնք կը գնան մեր երկիրը թէ այստեղի կլիմայի և բնութեան մէջ ապրելու և թէ գիտութեան այնպիսի ձեւերի աւելի մասնագիտորէն ուսումնասիրելու համար, որոնց զարգացումը կըրող է աւելի նպաստաւոր լինել մեր երկրում: Օրինակ, այն բոլորը, ինչ վերաբերում է հարաւի կլիմային, լեռնային բնութեան, մի քանի ազգագրական խնդիրներին, այդ բոլորը ամենաաջող և գործնական կերպով կարելի կը լինէր ուսումնասիրել մեր երկրի բարձրագոյն դպրոցներում:

Մենք կը վերադառնանք այս հարցին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XIV

Վաւերական փաստեր: Կենդանի վկաներ: Թանաջանքներ ճիշդ որոշված: Կարելի է մի համաշառ պատմութիւն կազմել:

Եւ հաւ ինչ է ասում այդ պատմութիւնը: Բառասուն տարի առաջ Սև ծովի արեւելեան ափերում վերջնականապէս լռեց երկարատև, յամառ լեռնային պատերազմի ժխորը: Երկիրը հանդարտվեց: Տեղի տալով ուսաց զէնքի

բով: Ապա կոնգրեսի հովանաւոր յայտարարվեց մի ուրիշ արքայական արեւելագէտ, Ա. աստ-րիայի արհիդուքս Ուէնիէն: Անմիջապէս կազմակերպվեց մի պատուոյ յանձնաժողով (Comité d'Honneur), որի նախագահն եղաւ Ֆրանսիայի ներքին գործերի այժմեան մինիստր, պատգամաւոր Վիլիէն, իսկ անդամները — Ֆրանսիացի զանազան գիտնականներ, սենատորներ, պատգամաւորներ, պրոֆեսորներ և Ալեքսի քաղաքի մէր (քաղաքագլուխ) Ալեք-րակ: Այդ յանձնաժողովը պէտք է զբաղվէր կոնգրեսի կազմակերպութեան հարցով, իսկ նրա գիտնական զբաղմունքների կազմակերպութեան և ղեկավարութեան գործը առաջ վարելու համար ընտրվեց մի այլ յանձնաժողով, այսպէս կոչված comité d'appui, որի անդամներ նշանակվեցին Ֆրանսիայի հաշտ-կաւոր գիտնականները և արեւելագետները, այն է պ. պ. 1) Բարբիէ դը Միլնար, անդամ ինտերուստի, սենատոր և պրոֆեսոր Ֆրանսիական կոլլեժի, 4) Կորդիէ, պրոֆեսոր արեւելեան կենդանի լեզուների դպրոցի, 5) Հուլա, պրոֆեսոր նոյն դպրոցի, 6) Մապիէրո, յայտնի պատմագէտ, 7) Սեմաք, անդամ ինտերուստի: Բացի այդ երկու յանձնաժողովներից, կազմվեց

ոյժին, ընդհ ազգաբնակչութիւնը չուզեց նուաճված մի ժողովրդի ճակատագրի հետ հաշտվել և սկսեց գաղթել Թիւրքիա:

Եւ լուրթիւն և ամայութիւն տիրեց Սև ծովի գեղեցիկ, հարուստ ափերին: Շուայլ ու փարթաւ բնութիւնը մահացու թոյն ունէր իր ծոցում—մալբարիան: Ռուս կառավարութիւնը սկսեց ուսու գաղթականները բնակեցնել այդ հարուստ ափերում: Սակայն գաղթականութիւնը քաղաքական նպատակ ունէր և երկրին օգուտ չը տուեց կուլտուրական տեսակէտից: Տեղի աշխարհագրական ու կլիմայական պայմանները չափազանց խորթ ու անսովոր էին նորիկների համար: Տեղացիները կարող էին գործել, աշխատել այն ազատ հողերի վրա: Բայց տեղացիներին կառավարութիւնը չէր թոյլ տալիս գաղթել Սև ծովի ափերը: Գիւլթայի նահանգում հողի սարսափելի պակասութիւնը կայ. այնտեղի ազգաբնակչութիւնը ինչդրեց հողաբաժիններ տալ Սև ծովի ափերում, բայց մերժում ասացաւ:

Եւ հարուստ բնութիւնը մատնված էր ամայութեան և վայրենութեան: Տեղացի խոշոր կալուածատէրերից մէկը, գեներալ-մայոր Իշխան Շերվաշիձէ Թիֆլիսի Գիւլթայի տեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստում այսպէս էր նկարագրում իրերի դրութիւնը.

«Մեր հողերը ամայի էին մնացել, մեզ ոչ մի արդիւնք չէին տալիս: Մենք փորձեցինք այնտեղ պարապել մթաբուծութեամբ, վազապահութեամբ և ուրիշ մշակութիւններով, բայց դրանցից ոչ մէկն էլ աշխուժեցնել չուներ»: Զանազան միջոցներն այնպէս էին ընդհանուր ծանրի պտուղները, այնպէս յաղհարեցին կալուածատէրերին, որ նրանք թողեցին իրանց փորձերը և չը գիտէին, թէ ինչ անեն իրանց հողերը:

Երկար ժամանակ այսպիսի հոգեվարքի մէջ էր գտնվում փարթաւ, գեղեցիկ, համարեա տրօպիկական բուսականութիւն ունեցող երկրի գիւլթայի տեսութիւնը: Անխնամ հողերը ծածկվում էին մացառներով, անտառները անյաղթելի արգելիքներ էին դնում ամեն մի կուլտուրական մտքի առաջ:

Այս այդ ժամանակներում Սև ծովի ափերում հանդէս եկաւ մի երևոյթ: Թիւրքիայից, գլխաւորապէս Տրապիզոնի և Սամսոնի շրջականերից, գաղթականներ երեւցին այնտեղ: «Իրանք երկրից եկած մասնաւոր էին մեզ համար», ասում է նոյն իշխան Շերվաշիձէն: Սկսվեց մի հսկայական կուլտուրական աշխատանք: Ամայի բնութեան ծոցում առատ թափվեց ժիւր աշխատաւորի քրտինքը: Մացառները մաքրվեցին, անտառները կտրուեցին և պատրաստվեց հող ծխախոտի մշակութեան մասար:

Ալեքսիում և մի կազմակերպչի մասնաժողով, որի նախագահ նշանակվեց պ. Բենէ Բասսէ (René Bassett), Ալեքսի բարձր դպրոցի վերատեսու չը:

Այդ յանձնաժողովների գործունէութեան շնորհիւ կոնգրեսի ճիւղերը և զբաղմունքի առարկաները որոշվեցին խախտել, առանձին շրջաբերականներ միջոցով, հրատարակվեցին իւր գիտնական աշխարհի: Կոնգրեսը բաժանվեց հետեւի ճիւղերի. I—Հնդկաստան. Արիական լեզուներ և Հնդկաստանի լեզուներ (այս ճիւղի մէջ է մտնում և Հայաստանը). II—Սեմիթական լեզուներ. III—Սուսուլման լեզուներ (արաբ, պարսիկ, թիւրք), IV—Եգիպտոս, Եթովպիական լեզուներ. V—Մայրագոյն Արեւել. VI—Յուդայական և Արեւել. VII—Աֆրիկեան Հնդկաստանի և Սուսուլմանական առեւտ:

Կոնգրեսի բացումը նշանակվեց 1905 թ. ապրիլի 6/19-ին և փակումը 13/6-ին: Զանազան գիտնական ընկերութիւններ, կրթական հաստատութիւններ, այս և այն կերպով կապ ունեցող արեւելագետներ, երկրագնդի զանազան կողմերից շտապեցին մասնակցել կոնգրեսի զբաղմունքներին պատգամաւորների և ներկայացուցիչների միջոցով. պետութիւններն և ուղարկեցին իրանց պաշտօնական ներկայացուցիչներին, իսկ զանազան գիտնա-

Դառն էր այդ մրցութիւնը բնութեան դէմ: Մարտիկի շերմախտը, մալբարիան, հնձու էր այդ ժիւր աշխատաւորների շարքերը: Զնշվեցին շատերը, բայց մնացածները, նորից եկողները շարունակում էին գործը, մինչև որ կառուցան յարմարվել բնութեան պայմաններին, սովորել կլիմային և նոր կացութիւն ստեղծել: Տասնեակ տարիներից ի վեր կուտ է այդ չարքաշ բանուորական կեանքը Սև ծովի ափերում: Եւ այսօր ահա ծխախոտի մշակութիւնը հասել է ծաղկած դրութեան. նախկին ամայութիւնը այժմ տալիս է տարեկան 1 միլիոն պուդ ծխախոտ՝ 10 միլիոն բուլբուլ արժողութեամբ...

Մի ամբողջ հրաշագործութիւն: Եւ նրա ազդած հիւսցմունքը աւելի կը մեծանայ, եթէ մենք մի քիչ էլ պարզենք այդ գաղթական ժողովրդի տաժառակիւր աշխատանքների պայմանները:

Թիւրքահայապալ գաղթականների մեծագոյն մասը հայերից է բաղկացած: Հայերից յետոյ գալիս են յոյները և թիւրքերը: Ահա նրանց թիւերը.

Հայ՝ 3700 ծուխ
Յոյն՝ 1700 »
Թիւրք՝ 200 »

Հայերը ամենից ճարտար մշակողներն են: Հայի ծխախոտը միշտ աւելի բարձր գին ունի: Դաղթելով Սև ծովի ափերը, տարածվելով ոչ միայն Սուսուլմանի և Սոչիի շրջաններում, այլ և հիւսիսային Կովկասում, այն է Կուս-բանեան շրջանում, հայերը թիւրքաց հալատակութիւնը չը թողին: Պատճառն այն էր, որ ուսաց կառավարութիւնը համաձայնում էր նրանց իր հպատակութեան մէջ ընդունել միայն այն պայմանով, որ նրանք հող չը ստանան: Այնպէս որ ընդունել ուսաց հալատակութիւն հայ երկրագործի համար պիտի նշանակէր զրկվել Թիւրքիայում ունեցած իր հողերից և նոր հող չունենալ Ռուսաստանում, որ ասել է միանգամայն և ընդ միշտ կտրվել հողից:

Եւ գաղթական հային մնում էր մի կը—տնտեսութիւն հիմնել Սև ծովի ափերին մասնաւոր պայմաններով, մասնաւոր հողատէրերից վարձելով ծխախոտի մշակութեան յարմար տեղեր:

Ուշագրութիւն դարձրէք այս հանգամանքի վրա,—նա չափազանց կարեւոր է: Դաղթականը հողային ոչինչ իրաւունք, ոչինչ սեփականութիւն չունի, նա միայն վարձաւոր է, ժամանակաւոր և պատահական բնակիչ մասնաւոր հողի վրա: Նկատէք, ոչ արքունական, ոչ հասարակական հողի վրա: Կան կալուածատէրեր, որոնք ունեն հագեցն հողեր և տալիս են այդ կանների և արեւելագետների թիւր, որոնք եկել են Ալեքսի աշխարհի զանազան անկիւններից, հասնում է 550-ի: Ամենից շատ ներկայացուցիչներ ունեն Ֆրանսիան և Ալեքսի-թուրքը: Կուսիսային Աֆրիկայի գրեթէ բոլոր նշանաւոր գիտնականները (եգիպտոսն ևս հաշուած) մուսուլման իրաւունքի մէջ (en droit musulman) ներկայ են. ապա իր ներկայացուցիչների քանակութեամբ առաջին տեղին է բռնում Գերմանիան, որին հետևում են Մեծ-Բրիտանիան (Հնդկաստանով), Հոլանդիան Միացեալ-Նահանգները, Աստրո-Ունգարիան, Շվեյցարիան, Բէլգիան, Իտալիան, Դանիան, Սպանիան, Ռուսաստանը, Փորթուգալը, Շվեդիան, Նորվեգիան, իսկ Զինաստանը, Պարսկաստանը, Զերոգորիան և Բուսանիան մի մի ներկայացուցիչ ունեն: Ռուսաստանը ունի ընդամենը 20 ներկայացուցիչ, պաշտօնական, այսինքն ուսաց կառավարութեան ներկայացուցիչն է պ. Ստրեբուլայիցը, որ Կոնստանդուպոլիս արեւելեան լեզուների ինստիտուտի արաբական լեզուի պրոֆեսոր է: Մնացածների մէջ կան պրոֆեսոր Կոլոյցով, տիկին Օլգա Լեբելովա, ուսաց արեւելագիտական ընկերութեան նախագահուհի, Բարոն Բոզեն, պ. Բուրգի գիտութեան պակագէտային անդամ, պրոֆեսոր Մէդելիով: Կովկասից երկու հոգի են մասնակցում պ. Դիւր և Հ. Առաքելեան: Վերջինիս

This image shows a blank, aged, cream-colored page, likely an endpaper or flyleaf of a book. The paper has a slightly textured appearance with some minor creases and discoloration, characteristic of old paper. The left edge of the page is bound, showing the stitching and the inner cover material. The overall tone is warm and slightly yellowed, suggesting the age of the document.